


891.99
F-12



ԱՐՁԱՆԻՐ ԲԱՐՈՍԵՆՆ



ՆՈՐ ՅՈՒԺԵՐ

Ձուտ արդիւնքից 20
տոկոսը յատկացելու
է հայ որբերի օգտին:

• • • • •



19 NOV 2011

Հոգեբանական Գրադպրատան Գրադպրատան Գրադպրատան
ԵՐԵՎԱՆԻ ԲԱՐԵՍԵՆՆԵՐ

1922 թ. Երևան

891.99
Բ - 12

21

ՆՈՐ ՑՈՒՔԵՐ

Բ.Զ.

1001
1926



Եկատերնոգոր, առաջագիտ, ԿՈՒՆՏԱՆԿԱՆ, Դ. Տալարեանի:

1918 թ. Տալիս:

26.02.2013

22896

Գրքոյկս նւիրում եմ ձեր սուրբ յիշատակին,
ով վեհ մարտիրոսներ, դուք, որ արհամարելով
կեանքն ու փառքը՝ ընկաք Աւետեաց Երկրի ազա-
տագրման համար:

Ա. Բ.



ԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Վիթխարի՛ լեռներ, ձեր սէգ լանջերում,
Թովիչ կանանչում երագ օրերիս,
Կարծում եմ մանուկ, չին օրն է խօսում
Հայրենի կրծքից անցածը նորից:

Լսում եմ երգը հովի սընգից,
Յուշերիս անուշ արձագանքը չին,
Ու ամեն քարից, ձորից, ծմակից
Մի երգ վաղեմի արթնանում կրկին:

Չընաղ հայրենի դիմակա՛ն լեռներ,
Ես ձեզ եմ՝ երգում, ձեզ հոգուս գնով,
Դուք, որ շոյում էք հէքեաթ, երագներ,
Ու որ կանչել էք անհուն կարօտով:

Ես ձեզ եմ՝ զայիս, ձեզ որպէս գերի
Թափառաշրջիկ մի երգիչ օտար,
Ու ձեր արքունքով բանալ ընարիս
Մեղմօրօր ձայնը, չընա՛ղ հայրենիք:



ԱՄԱՆՈՐ

Նոր-Տարի է... Նոր յոյսերի, Նոր յոյզերի ամանոր,
Վառ իղծերի հիասթափման մի խաբուսիկ առաւօտ,
Հինը անցաւ, այն մերը չէ, ահաբեկիչ ամենօր,
Մերը Նորն է՝ վերածնման Նոր յոյս բերող ծիծաղ-
կոտ:

Արիւնաքամ ու տարագիր հայ ժողովուրդ անտէրունչ
Նոր տարիներ շատ է տեսել, սեւ տարիներ մահաբեր,
Էս Նոր տարին վերջ կբերի՝ հայի ցաւին մահաշունչ,
Այնքան աւեր, դարդ ու ցաւեր հայ երկրի քնաւեր:

Վերածնման Նոր յոյսերով, Նոր իղծերով արբեցած՝
Երգ ու տաղով բեզ է դիմում հայ ժողովուրդ չա-
րատանջ,

Արդեօք, ի՞նչ ես դու մեզ բերում, մի կեանք մահից
ազատած,

Թէ՛ Նոր ծանր յուսախափման մի ահաւոր առաւօտ:

ԴԷՊԻ ԱՆԱՊԱՏ

Ես կմոռանամ՝ աստածները հին,
Անմիտ ստեղծումն մարդկային մտքի,
Պատգամները սին, չարն ու բարին,
Անտաճ սէրը՝ մոլար ամբոխի:

Կերթամ՝ անապատ՝ անհուն լուծեան
Խոր զաղտնիքներին լուռ կունկնդրեմ՝,
Ու երգս կտամ՝ կեանքի սրբութեան,
Մենութեանս մէջ արտանց կաղօթեմ:

Եւ արեւավառ խոր անապատում,
Հոգիս ունկնդիր նրա բարբառին,
Օ՛, դէպ արեւը, վսեմ՝ բարձրունքում
Ես կստառնեմ անվերջ, անկայան:

Այդ անհուն, անվերջ տարածութեան մէջ
Տիեզերական տարերքի զրկում,
Ուր ստեղծագործ մեծ ոյժն անշէջ
Նոր պատգամների զանգեր է ծուլում:

Այնտեղ կծուլեմ հոգիս յաւիտեան
Մեծ տիեզերքի անմահ էութեան:

ԳԱՂԹԻ ՃԱՄԲԻՆ

Ասես ո՞վ էր ցուրտ գիշերին
Նազ ձենով հառաչում,
Սեւ ազո՞ւնէ աւեր բնին,
Թէ սարերից գայլն ոռնում:

Ցուրտ գիշերին ծայր տխուր,
Բքի բերնին հեկեկում,
Ախ, դա մի մայր բնկած ցեխում
Ողբում է ու հառաչում:

— «Քնիր, բալաս, սեւ գիշերին
Դու դադարգուն ու անաուն,
Ձիւնն էլ այստեղ մեր ցաւերին
Գերեզմանն է ամենցուն:

«Զուլումն եկաւ, արին, թալան,
Մեր տուն ու տնդ քանդեցին,
Կտոր հացը խլին տարան,
Տուն ու օջախ այրեցին:

«Մեծ աղբերդ ճամբին մնաց,
Բուքը խեղդեց, ախ բալաս,
Դայլը սաւէն սովից ոռնաց...
Քնիր, քնիր իմ բալաս:

»Քնիր, բալաս, ազիզ բալաս,
Ձիւնն էլ քեզ մի օրօրոց.

Դեռ չի բացել մեզ լուսաբաց,
Քնիր, քնիր, իմ բալաս»...

Ու մայրական զոյգ աչերը
Կաթիլ, կաթիլ արտասուեց,
Թրջեց որդու սառ դիակը՝
Սառ ճիւղի մէջ պատանքեց:

130.

ԲԱՆԻՈՐՆԵՐԻՆ

Բմբուստ եղէք, հէ՛յ բանւորներ,
Ծնշող ոյժի, կապի դէմ,
Ազատ կեանքում խեղճ ստրուկներ՝
Մենք չթողնենք երկնի տակ...

Ջնդաններով, կռաններով
Փշրենք շղթան դարևուր,
Դաժան մուրճի անեղ թափով
Երգը ձօնենք վաստակի,
— Կամքը լինի ստրուկի:

Կեանքն հաւասար ամենքին,
Նա մեզ շղթայ չի տեւէ...
Մենք ենք կապել մեր ձեռքին
Ամուր շղթան մեր կռած,
Մենք էլ կանենք փշրած:

Բմբուստ եղիր, հէ՛յ ժիր բանուր,
Չար ոյժի դէմ ահաւոր,
Ջնդաններով, կռաններով
Փշրենք շղթան դարևուր:

ԴՐԱԶԱՐ

Է՛յ, բանւոր՝ ընկեր, դու արճրճային
Մրտա աշխարհի մրուրը ծծիր,
Քո գործը վե՛հ է, փա՛ռք քո վաստակին,
Հլու մամուլին՝ անդադար շարիր:

Քեզնով է գորեղ խօսքն արդարութեան,
Ու քեզնով պիտ նա յարութիւն տանի,
Անխոնջ հռանդով մտիր տպարան,
Փա՛ռք ազատ խօսքին — անվճատ շարիր:

Անդու վաստակով դու լոյս սփռեցիր
Խաւար աշխարհին, ու քո թոյլ հիւժւած
Թոքերիդ բոցով լոյսը վառեցիր,
Ինքդ մնացիր լոյսից հալածւած:

Է՛յ, բանւոր ընկեր, դու արճրճային
Մրտա աշխարհի մրուրը ծծիր,
Հլու արդարին, շնամարիտ խօսքին,
Փառ՛ք քո վաստակին, շարիր ու շարիր:

*
* *

Մո՛ւշ-մո՛ւշ, անո՛ւշ մի երգ անյուշ
Սրտիս դիպաւ ու անցաւ,
Վէրքիս անբուժ, օ՛, մելանուշ
Մի բան հեւաց ու անցաւ...

Իմ տենչերի թաղումների
Մեռած ո՞ղբն էր մորմորքաց,
Թէ՛ հին օրի վառ խոհերի
Ծրզն էր նորից հեծեծաց...

*
* *

Որոնումներիս նամբէն անընդհատ
Բայլում եմ հեռու՛ն՝ մոլար ու վհատ,
Ու ես չգիտեմ թէ ու՞ր պիտ գտնեմ
Մի հանգիստ կայան — հոգիս ամոքեմ:

Ու ճանապարհիս միջին կայանում՝
Վերջին անգամը սիրտս է դողում,
Այնտեղ կուէ իմ երգը ուժգին,
Եւ դառն դողանջներ կհեծեն նամբին...

Ու անծայրածիր ճամբիս ոլորտում
Կեանքիս յուսաշող երազն եմ թաղել,
Երազիս շքեղ կառուցածքի տակ
Հոգիս եմ փռել մոլար ու մենակ:

Բայց, ո՞վ կորոնէ իմ անթաղ հոգին,
Ո՞վ կըզուրգուրայ երգերս ողբազին,
Որոնք անմուրազ ընկան հէք կեանքիս
Յուսաշող ճամբին...

ԲՆՈՒԹԵԱՆ ԳՐԿՈՒՄ

Կանանչ հովիտում՝ զեփիտն է շում,
Պաղպաջուն առուն մեղմիւ խոխոջում,
Ու խիտ անտառի թաւառ անցքերից
Հասինը առին ժպտում է վերից:

Իւ խոր լուծեան անհուն թեւերում՝
Անվրդով քնով անտառն է նիրում,
Յոգնած թփերին զեփիտը բոյրով
Ասես հէքեաթ է պատմում՝ համբոյրով:

Խաղաղ է քնութիւն, ծիծառն է ննջում,
Նա իր երազում արեւն է զովում,
Ու խորհրդատր խոր լուծեան մէջ
Ամեն ինչ դողում, վառում սիրատենչ:

Եւ ես մենմենակ այդ լին պահուն
Խոկում եմ անհաս, անձանթ հեռուն,
Լուծեան խորքից մի ոսկի երազ
Գգուն թեւերով իջնում է վրաս...

ԲԱՆՏՈՒՄ

Պատուհանիս մօտ թռչունը երգեց,
Անուշ գեղգեղացի իր երգը դայլայլ,
Հատիկ ու հատիկ երգը շաղ տեց
Ոսկի դոդանջով իմ հոգուս մոայլ:

Ու ես մոռացայ փականքն իմ դռն,
Բանտիս մոայլն աչքէս խաւարեց,
Հին, ազատ կեանքիս յուշերն եկան՝
Պատուել սղջամուղջն իմ՝ թախծոտ սրտից...

Ու դայլայլ երգի ելեւէջների
Ծնչով խննթացած ուզեցի թռչել
Դէպ ազատ լեռներ, վեհ ու պանծալի,
Ուր մարդն ազատ է ու շղթայ չունի:

Բայց դաժան շղթան իմ թոյլ ոտների
Ուժգին շառաչեց — «Կո՛ւց, քեզ չեմ թողնի»...

1 լուսնարի 1917 թ. Գանձակ,
Զինուորական բանտում

ԲՆՈՒԹԵՐՆ ԳՐԿՈՒՄ

Կանանչ հովիտում՝ գեփիտն է շում,
Պաղպաջուն առուն մեղմիս խփտջում՝,
Ու խիտ անտառի թաուտ անցքերից
Լուսինը աուին ժպտում է վերից:

Եւ խոր լուծեան անհուն թեւերում՝
Անկողով քնով անտառն է նիրհում,
Յոգնած թփերին գեփիտը բոյրով
Ասես հէքեաթ է պատմում՝ համբոյրով:

Խաղաղ է քնութիւն, ծիծառն է ննջում,
Նա իր երազում արեւն է գովում,
Ու խորհրդաւոր խոր լուծեան մէջ
Ամեն ինչ դողում, վառում սիրասենչ:

Եւ ես մենմենակ այդ լին պահուն
Խոկում եմ անհաս, անձանօթ հեռուն,
Լուծեան խորքից մի ոսկի երազ
Դգուն թեւերով իջնում է վրաս...

ԲԱՆՏՈՒՄ

Պատուհանիս մօտ թռչունը երգեց,
Անուշ գեղգեղաց իր երգը դայլայլ,
Հատիկ ու հատիկ երգը շաղ տեց
Ոսկի դողանջով իմ հոգուս մուսյ:

Ու ես մոռացայ փականքն իմ դռան,
Բանտիս մուսյն աչքէս խաւարեց,
Հին, ազատ կեանքիս յուշերն եկան՝
Պատեկ աղջամուղջն իմ՝ թախծոտ սրտից...

Ու դայլայլ երգի հլեւէջների
Ծնչով խենթացած ուզեցի թռչել
Դէպ ազատ լեռներ, վեհ ու պանծալի,
Ուր ժարդն ազատ է ու շղթայ չունի:

Բայց դաժան շղթան իմ թոյլ ոտների
Ուժգին շառաչեց — «Կա՛ց, քեզ չեմ թողնի»...

Ի լուսնարի 1917 թ. Գանձակ,
Զինուորական բանտում՝

*
* *

Սէգ լեռներից աղբիւր կուգայ
 Համբուրելով քարերին,
 Ու մո՛շ-անո՛շ կզնգայ՝
 Արծաթ փրփուրն բերանին:

Եարօտ սրտէս արին կուգայ
 Եման վարար հոսանքի,
 Վո՛շ-վո՛շ, անուժ կը հեծկտայ.
 — Էնոր ծորէն վերջ չկայ...

*
* *

Էս գիշեր հին յուշեր անմեկին
 Պատեցին իմ հոգին դառնագին,
 Մի եղերգ հեաապատ ցաւատանջ
 Իմ հոգուն պարուրեց մղձաւանջ:

Եւ այդ երգ հովի պէս վաղանցիկ,
 Վաղանցիկ ինչպէս շունչը կեանքին
 Պար եկան հոգուս շուրջ դարձ-դարձիկ,
 Ու խլեց ամեն ինչ թանկագին:



*
* *

Ո՞վ է տուել մեզ գոյութիւն,
Անհաս տենչերն մեր մոքի,
Սին, վաղանցիկ ունայնութիւն,
Ու մեզ գերել տանջանքի:

Կեանքը ցաւոտ բոց է վառւած,
Մարդն է խամրում այդ բոցում,
Նոր սերունդներ իբրեւ կայծեր
Կեանքի բոցը բորբոքում:

Ու աշխարհը ցաւի ուկեան,
Այդ ուկեանում անկայան
Լող ենք տալիս ցաւով բեռնւած,
Յաւով իջնում գերեզման:

Կեանքը նման փոթորիկի
Անձեւ, անտես շարժումին,
Իր հետ բերում, իր հետ տանում,
Ինքնէլ առանց հետք անցնում:

Մ Թ Ն Չ Ա Ղ

Նւէր Երաժշտագետ Յակոբ Նալարեանին:

Ծառուղիների լոին տարածութեան վրայ,
մթնշաղի անծայրածիր խորութեան մէջ, հոգիս դե-
գերում էր հեռաւոր անյայտ՝ մոլոր որոնումներին
ապագան:

Ու մենութեան թախիծը ծանրացած կրծքին՝
մի քանի էի կարօտում, քայց ինչի՞ — չգիտեմ...

Օ՛, մենութիւնը՝ անծայրածիր խորհուրդներով
վ...

Ու լսեց ջութակի հեծկտող խուլ թոթոռում-
ները, տխուր ու թախժոտ, նման մթնշաղի մեղմի
մարումին...

Այդ թոթոռները, կարծես խօսում էին մե-
նութեանս խոհերից, դեգերումներին ու մթնշաղի
անհունից...

Վայրկեանի չափ ապրեցին, գրկեցին էութիւնս
ու մեռան հոգուս ուրբտներում, ինչպէս ապրեցին ու
մեռան մատաղ յոյսերս, ոսկի տենչերս...

Օ՛, այդ կեանքի Չկան էր, որ հոգուս խոր-
քով անց կացաւ...

Թո՛ղ որ կեանքը միշտ այդպէս մթնշաղ լինի

ու խոհերս ջութակի թոթումների հետ մեկտեղ
ծնին ու մեռնին, մարտոյ մթնշաղի գրկում, կեան-
քի Չկայի անապարհն...



Մ ի ր ո յ ք ն ա թ ի ց

Փ Ո Ւ Ն Ջ Ը

Քո փունջիդ մէջ կոկոն վարդի սիրեցի,
 Ետքը հարածովդ իր արժասից բաժանած,
 Զերմ արեւը չհաքոյրած—այդ իմ կրծքին՝ գրկեցի,
 — Կոկոն վարդը սիրեցի:



Սիրտս էլ կոկոն կեանքի փնջում նոր ծաղկում,
 Խոր նայածքիդ համբոյրներով շանթիարած,
 Կեանք չմտած՝ կեանքի շէմքում երերում՝
 — Սեւ աչերդ եմ երգում:

Սէրն էլ ունի վարդի նման սուր փշեր,
 Բայց ես փշոտ կոկոն վարդը սիրեցի,
 Մատաղ սրտիս փարեցի, սիրոյս ջերմով գրկեցի,
 — Կոկոն վարդը ընտրեցի:

* *

Էն սեւ աչերն մելամաղձոտ
Մեղեղիի հնչման տակ,
Որ նայում են վէս ու թափածոտ
Միշտ վեր ելթեր, խո՛ր, անյա՛գ—

Ես ապրում եմ այդ աչերում
Անցած կեանքիս վերյիշումն,
Ուր շատ խորն է, էդ խորքերում
Անուրջներ են խոնում...

* *

Միբոյս տենդերի, խօլ թոփչների
Անգուսպ, կրակոտ թափով մոլեգին՝
Ե՛կ, կոյս գեղանի, քեզ ապրումների
Երկինքը տանեմ — խորքերն անհունին:

Օ՛, այնտեղ յատակ բիրեղի նման
Միբոյ օրհներգն է անվերջ դողանջում,
Ուր դեռ չի հասել միտքը մարդկութեան,
Ուր դեռ չի լսել վիշտ ու մորմորում:

Ու մենք կը տեսնենք զսեմ՝ քարձրունքից
Թէ ինչպէս մարդիկ ներքեւ կըսողան.
Սէգ արծիւները ժայռի ծերպերից
Մեզ կնախանձեն — մեր քարձրին անհաս...

*
* *

Օ՛, կուգէի մի վարդ լինել,
Սիրոյ ցողով շաղախած,
Կրծքիդ վրայ յաւերժ ապրել,
Բո վառ սիրոյդ նւիրած:

Ու պապական ապրումներով
Սէրդ ծծեմ—յագենամ,
Կրծքիդ վրայ խենթ արքումով
Յաւե՛րժ, յաւե՛րժ վառ մնամ...

*
* *

Ահի աղբիւրի մօտ անակս լինէր,
Շարքերի մէջ վէս բարդիների,
Ճակտիս համբոյրը գեվիւտը շոյէր
Սիրավառ կոյսի հեզ շրթունքների:

Ու վառ արքունքի գինին ըմպէի
Անէացումի, խորագգաց սիրոյ,
Գողտրիկ շշուկով սէրն օրհներգէի,
Ու օրհներգի հետ մէկտեղ ձուլէի...

*
* *

Կուգէ՛ի կեանքս մի երազ լինէր,
Սիրոյ ճմայքով արքած ու տարած,
Զո սէգ մագերից բնարս լինէր,
Երգս՝ աշերիզ ճմայքով ճիւղած...

Եւ քո շրթոնքից գինին արբունքի
Անյազ ծծէի ու վերջ չլինէր,
Երգդ լսէի՝ օրհնեղը կեանքի,
Ու կեանքս սիրոյ մի յէրեւթ լինէր...

*
* *

Հայի բնաւեր երկրից եմ գալիս՝
Չեղբիս ծաղկեփունջ արնոտ վայրերից.
Երա թերթերը՝ տխու՛ր, թախծաւի՛ց,
Հայի ահաւոր մորմոքն են լալիս:

Կուի վայրերից վիրաւոր, մենակ,
Օ՛ր, քեզ եմ բերում նէրս միակ,
Առ պսակ հիսիր վախճանիս ժամին,
Մահւանս անկողնում՝ տփզոյն ու դալուկ՝
Ծաղիկներն շաղ տուր, իմ պաղ մնարին:

*
* *

Հէ՛յ, վառ աստղեր, երկնի աչեր,
Որ տեսնում էք դուք վերից
Ի՞րեր արշաւանք, մեր գրոհներ,
Վեր, ու վարը լեռներից:

Դուք, որ գողարիկ նուրբ շոյանքով
Փայլփլում էք աինիս,
Ու լոյս շաղում: Թափանց շողով
Մութ ու խոնաս դիրքերիս,—

Պատմէք նրան ու՛մն է յիշում,
Ու՛ժ կարօտում վառ հոգիս,
Ու՛ժ սիրով եմ սգեւորում
Այս մահաբեր դիրքերում:

Գործող բանակ
Ճանկաց ճակատ 1916 թ.



8 Ա Ն Կ

	Երես
Հայրենիքում	5
Ամանոր	6
Դէպի անապատ	7
Դաղթի ճամբին	8
Բանուորներին	10
Գրաշար	11
Մուշ-մուշ, անու՛շ	12
Որոնումներիս ճամբէն անլնդ՛ատ	13
Բնութեան գրկում	14
Բանտում	15
Սէգ լեռներից աղբիւր կուգայ	16
Էս գիշեր հին յուշեր ,	17
Ո՛վ է տեւէ մեզ գոյութիւն	18
Մթնշաղ	19
Փունջը	23
Էն սեւ աչերն մեղամաղճոտ.	24
Սիրոյս տենդերի.	25

Օ՛, կուգէի մի վարդ լինել	26
Ակն աղբիւրի մօտ	27
Կուգէի՛ կեանքս մի երազ լինէր	28
Հայի ընտանիք երկից եմ գալիս ,	29
Հէ՛յ, վառ աստղեր	30

==

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐ ԶԵՂԻՆԱԿ և Կ. ԲԱԲԱՅԵԱՆՆԵՐ:

20

Դիմն է 2 ր. 50 Կ.

Դիմել Էկատերիոնար, Էկատերինսկայ 3,
Արշավիր Բաբասյան.

ՀՀ Ազգային գրադարան



NI 0321831

22846